

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բժիշկ Յովհաննէս Զաքարեան Լօրիս-Մէլիքեան իր քոյրերի հետ, և իշխան Նիկոլայ Անդրեասեան Արզումանի—Գօղթուկով, յատկապէս առաջինները իրանց մօր, իսկ վերջինը իր քրոջ

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆԻ

մահական մասին, խնդրում են ազգականներին և ծանօթներին՝ շնորհ բերել յուր զարկաւորութեանը, սեփական տնից, Սարգիսյան փողոցը, դէպի Մոզնուս. Գէորգ եկեղեցին, յուլիսի 13-ին, չորեքշաբթի, առաւօտեան 9 ժամին:
Ամբիջը լինելու է երեքշաբթի, երեկոյեան 7 ժամին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այսօրվայ ընտրութեան առիթով.—Ներքին Տեսչութիւն. Առաջին օրը. Սովետների օգտին. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ. ԲԻՆ ՏԵՍՉԱԿԻՆ. Գործադրութեան Միացիւն-Նախագահութեան. Նամակ խմբագրութեան. Արտաքին լուրեր. Հեռագրեր. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական աշխարհից.

ԱՅՍՈՐՎԱՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Այսօր, յուլիսի 12-ին, պէտք է կատարվի Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձութեան ընտրութիւնը:

Պէտք է ասել, որ նոր հոգաբարձութիւնը գործելու ասպարէզ է գալիս շատ անհաւաստ պայմաններին մէջ երկու պատճառով. նախ Տէր հոգաբարձութեան օրով գործերը այնքան խճճիկ և դպրոցն ընդհանրապէս այնպիսի վիճակի մէջ է ընկել, որ նոր հոգաբարձութիւնը ահա-գին ջանքեր, շատ մեծ աշխատանք պէտք է գործ դնի, որպէս զի կարողանայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Ինչպէս երևում է, Ֆրամարիօնը իր սեփական մտքերը դրել է օրսովատօրիայի տեսչի բերանում. նա գտնէ նոյն կարծիքն է, որ մուրաբի ընդհարմելը երկրի հետ առաջ կը բերի միմյան մասնաւոր աւերումներ, Երբեք յետոյ երկրի դարձեալ կը շարունակի պտոյտ գալ արեգակի շուրջը, իսկ մարդիկ կը շարունակեն դիմել իրանց կատարելապետութեան և բաղդին, և որ երկրի վախճանը տեղի կունենայ միմյան 10, կամ 30 միլիօն տարուց յետոյ, երբ կը հանգչի արեգակային սիստեմը և նրա հետ գուցէ և ամբողջ տիեզերքը, որից յետոյ երկու մարած արեգակային սիստեմները, միմյան վերջով, սկիզբ կը տան նոր աշխարհներին և նոր կեանքին:

Վերին աստիճանի հետաքրքիր են, մասնաւոր Միլայօլօկու տեսակէտից, և այն հասարակական—բարոյական պայմանները, որոնց մէջ, Ֆրամարիօնի կարծիքով, կը գտնվի XXV-որդ դարու մարդը: Երբ աստիճան, Ֆրամարիօնը այն կարծիքն է, որ աստղագիտութիւնը այդ օրերում հասած կը լինի իր դարգացման գագաթնակէտին. նա կը լինի ամենաբարձր գիտութիւնը, որի շուրջը կը պտտեն և որին կը ծառայեն բոլոր միւս գիտութիւնները: Ֆիզիկայի և քիմիայի առաջադիմութիւնները միջոց կը տան աստղագիտութիւնը ամբողջ դադարեցնելու հաստատել Հիմալայ սարի գագաթին, որի ծայրին դրված կը լինի, ծովից 8000 մետր բարձրութեան վրա, մի այնպիսի խոշոր աստղագիտական հետազոտակ, որը հնարաւորութիւն կը տայ տեսնել և ջոկել Մարսի վրա գտնվող նոյն իսկ ամենափոքր նշանները:

ձեռք է սկզբում, Հիմալայի գագաթում ապաստանող աստղագետների բանը մի քիչ դժուար կը լինի ցրտից և օդի նստածութիւնից, բայց էլեւ-

դպրոցը ցանկալի բարձրութեան վրա կանգնեցնել. և երկրորդ այս անգամվայ ընտրութիւնները այնպիսի մեծ հետաքրքրութիւն են յարուցել հասարակութեան բոլոր շրջաններում, այնպիսի մեծ աշխուժ են հանել, որ հասարակութիւնը կարծէք ըստպատում է նոր հոգաբարձութեանը մի անսովոր գործունէութիւն, անսովոր եռանդ:

Կարող կը լինի արդեօք նոր հոգաբարձութիւնը բաւականութիւն տալ հասարակութեան սպասկիքներին և արդարացի կը վրա դրած յոյսերը—այդ ցոյց կը տայ ապագան. մենք սովորութիւն չունենք վաղ-օրոք գովասանքներ ըստլել:

Այսքանը միայն կասնել, որ նոր հոգաբարձութեան ընտրութիւնը ոչ պատահական գործ է և ոչ էլ մի կուսակցական նեղ ձգտում՝ անպատճառ հեռացնել հակառակ կուսակցութեան ներկայացուցիչներին, և նրանց տեղ ընտրել մեր կուսակցութեան մարդկանց: Ոչ:

Ընդհակառակն, այն ահագին ընտրողական պայքարը, որ սկսվեց դեռ անցյալ տարվանից Ներսիսեան դպրոցի հոգաբարձա-

կան ընտրութեան համար, և այն ջանքերը, որ գործ են դրվում կազմակերպելու հոգաբարձական նոր խումբ, հիմնված են որոշ ծրագրի և որոշ ցանկութիւնների վրա:

Ինչ է այդ ծրագրի և այդ ցանկութիւնների նպատակը—մի բան, հանել Ներսիսեան դպրոցը իր այժմեան վիճակից, և հասցնել նրան այն բարձրութեան, որին արժանի է Ներսիս Աշտարակեցու այդ անմահ կոթողը, հայոց այդ պատկառելի դպրոցական հիմնարկութիւնը:

Խոստովանում ենք, նոր հոգաբարձութիւնը մեծ եռանդ և մեծ աշխատութիւն պէտք է գործ դնի, որպէս զի իրագործի իր նպատակը, օրովհետեւ դպրոցի պակասութիւնը մէկ է, երկու է, այլ բազմա-

Պէտք է անմիջապէս ձեռնարկել նոր շինութեան, որովհետեւ այժմեան շինութիւնը ոչ թէ միայն յարմար է, այլ այնքան անպէտք, այնքան խորիւրդ և հակառողջական, որ մեծ անպատուութիւն է բերում դպրոցի անունը:

Պէտք է կազմակերպել օրինաւոր ուսուցչական խումբ, որպէս զի այդ խումբը իր ձեռնհաս և համբերալի գործունէութեամբ կարողանայ բարձրացնել դպրոցի ուսումնական մասը, և տայ հասարակութեան մտաւորապէս աւելի զարգացած և աւելի պատրաստված աշակերտներ, քան թէ տալիս է այժմ:

Այդ նոյն պատասկին հասնելու համար պէտք է մշակել և լրացնել դպրոցի ծրագիրը, պէտք է որոշել հոգաբարձութեան և մանկավարժական ժողովի իրաւունքների սահմանները ուսումնական

ուելու համար...

Այդ օրերում կը լինեն մի քանի նշանաւոր կանայք—աստղագետներ, որոնք ամենայն անհունութեամբ կը հետեն ժամանակակից աստղագիտութեան առաջադիմութիւններին: Մի քանի լուսաւոր երկրներում կանայք կը զարգան մայրեր լինելուց, գտնելով այդ պաշտօնը խիստ ծանր, և թողնելով այդ ուրիշներին—հասարակ գիւղական կանանց:

Ահա և XXV-որդ դարու կնոջ պատկերը Ֆրամարիօնի գրչի տակ: Նրանք կունենան փոքրիկ դուկներ (կանանց ուղեղը միշտ քիչ է լինի զարգացումը ուղեղից). փոքրիկ ճակատներ, այդ փոքրիկ դուկները դրված կը լինեն քնքոյ, ճկուն պարանոցների վրա. ուսերը և կրծքերը այնքան ճոխ կը լինեն, ինչպէս երբեք չեն եղել, և նրանք աւելի քան երբ և իցէ կը գրդուն մարդկանց հիացումը թէ իրանց ամբողջ ֆիզիկայով, թէ իրանց հայեացքի անսովոր պարկեշտութեամբ, թէ իրանց տաքութեամբ, և թէ իրանց ուրուրեւ աւելումի ծամբումը... Նրանց բարակ մէջքերը, սովորական մարմինները, թանձալից աչքերը, ոսկրիայ մաղերը... բոլորը անմասն կը լինեն (Միլայօլօկին դատում է, որ վերս իշած Նօվոյօլօկիին համար նկարելու յարմար բաներ կը լինեն): Էջին—կենդանական ծնողը, շարունակում է Ֆրամարիօն, անհետացած կը լինի, տեղ տալով իրէպական փոքրիկ բերանիկներին... և նայելով նրանց հիացնող ժպիտներին, նրանց մարգարտաւար ատամնակները, պարփակված վարդա-գոյն շրթունքները մէջ, նոյն իսկ անհասկանալի կը մնայ թէ ինչպէս նախկին, հինաւորեց սիրահարները կարող էին այնքան ջերմազին համբարել նախկին կանանց շրթունքները նրանց գազանային ատամներով, որոնց օրինակները պահված են (այսինքն պահված կը լինեն) ազգագրական մուզէումներում:

Ինքնով խոշոր և փայլուն մաքր տէր աստղագետ, Ֆրամարիօնը, սակայն, նոյնպիսի խոշոր և փայլուն մաքր տէր չէ գիտութեան ուրիշ ճիւղերում. օրինակ նա և վատ ֆիզիկոս, և

մասի մէջ,—միջոցաւ նա այժմ գտնվում է վերին աստիճանի անորոշ և խճճված:

Պէտք է կարգի բերել դպրոցի ան տեսական—կալուածական գործերը, որոնք մինչև այժմ վերին աստիճանի անխնամ վիճակի մէջ են, մասնաւոր որ խիստ հակադրութեան ժամանակ, այդ կալուածքները, անկասկած, կրկնապատիկ եկամուտ կը տան, միջոց տալով հոգաբարձութեանը այդ աւելորդ եկամուտներով օգնելու այն հարկաւոր պատանիներին, որոնք աղքատութեան պատճառով ստիպված են լինում թողնել դպրոցը:

Այսպէս ուրեմն, նոր հոգաբարձութեան առաջ դրված են մի շարք շատ կարեւոր խնդիրներ, որոնցից մի քանիսը միայն մենք ժեշտելու և որոշելու ենք. շուտ է նոր հոգաբարձութեանը եռանդ և գործ:

Ժամանակ է, վերջապէս, որ Ներսիսեան դպրոցի վարչութիւնը և ամբողջ կազմակերպութիւնը դուրս գայ այն թմրութիւնից, որ տիրել է այդ հիմնարկութեան վրա տարիներէ ի վեր. ժամանակ է, որ այդ մեծ հիմնարկութիւնը աղատվի այն չինական պարսպից, որով շրջապատված է եղել երկար տարիներ. ժամանակ է, որ նա հիմնովին վերանորոգվի ժամանակակից մանկավարժութեան և գիտութեան պահանջներին համեմատ:

Եւ հէնց այդ վերանորոգութեան գործում ահագին դեր ունի կատարելու նոր հոգաբարձութիւնը:

վատ քիմիկոս, և վատ բիոլոգ, և վատ սոցիոլոգ է: Ընդունելով և վճռված համարելով մուրաբի կի շրջանը, երկրի վրա և դրա հետ կապված մի շարք կործանական բաներ մի հողաշնչի վրա, Ֆրամարիօնը—նկատում է Միլայօլօկին—մի քանի անգամ կանգ չէ առել այն հանգամանքի վրա, որ այդ մի և նոյն XXV-որդ դարում ֆիզիկան և քիմիան կարող են հասած լինել մի այնպիսի առաջադիմութեան և զարգացման, որ կարող կը լինեն ոչ միայն թուլացնել, այլ և առաջն առնել թէկուզ այնպիսի արհաւիրքների, ինչպէս, օրինակ, կը լինի մուրաբի շարժումը դէպի երկիրը: Այն ինչ այդ գիտութիւնների հէնց արդի դարում կը հրաւիրէ արդեւ առաջադիմութիւնները մեղ իրաւունք են տալիս, մասնաւոր մի այնպիսի ֆանտաստիկական գրութեամբ, ինչպիսին է Ֆրամարիօնի «Աշխարհի վերջը» գրութեամբ, այդ գիտութիւններին աւելի պատկառելի տեղ տալ, քան թէ տուել է նրանց ինքն Ֆրամարիօն:

Շարունակում ենք առաջ բերել Միլայօլօկիւ առարկութիւնները այդ գրութեամբ վերաբերմամբ: Ֆրամարիօնը կարծում է, որ XXV-որդ դարում բանաւոր դասը դարձեալ քիչ պարկեշտ ժամանակ չի ունենայ: Այն ինչ, ով չը գիտէ, որ և հէնց ներկայումս թէ թէօրին և թէ պրակտիկան ուղղված են կրճատելու այդ մշակ դասի աշխատութեան ժամանակամիջոցը դրեթէ բոլոր եւրօպական երկրներում: Անկասկած, այդ բանի մասին ինքն—Ֆրամարիօն էլ գիտէ, բայց նա գտնէ և առել այդ հանգամանքը և իրան բաւականացած է համարել միայն նրա համար, որ այդ օրերում մշակ դասակարգը կունենայ իր սեփական աստղագիտական հետազոտակները... Ինչպէս տեսնում էք, ամբողջ աշխատութիւնը գրված է ad majorem astronomiae gloriam—ի մեծ փառաբանութիւն աստղագիտութեան...

Ֆրամարիօնը կարծում է, որ կանցնեն դարեր և կանայք դարձեալ բաժանված կը լինեն երկու դասակարգի՝ տիկիներ և աղախիներ, բարձր

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՏԵՂԻ ՈՐՈՇՈՒՄ

Վեհափառ. կաթողիկոսը որոշելով Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձական ընտրութիւն կատարելի՝ հոնդակով պատուիրել էր առաջնորդին՝ այդ ընտրութիւնն անյապաղ կատարել և շուտափոյտ առաջարկել ի հաստատութիւն: Այս կրկնակի ստիպողական խօսքերից պարզ երևում է վեհափառի կամքը, որ նոր հոգաբարձութիւնը հենց այս ամառ ընտրվի ու հաստատվի, որպէս զի խնդիր գործի ձեռնարկէ և եկող ուսումնական տարվայ համար կարգադրութիւններ անէ:

Ուրիշ ոչ մի տեսակ չէ կարելի հասկանալ կաթողիկոսական կոնդակի ստիպողական խօսքերի նպատակը:

Խառամաբնութիւնը խնդիր հասկացան վտանգը, որ սպառնում էր իրանց գրութեանը Ներսիսեան դպրոցում:

Յունիսի 19-ը միանգամայն արդարացրեց խառամաբնութիւնը երկրորդը:

Փոխանակ անկողնութեամբ խոստովանելու, թէ՛ լինելով յաղթանակ, այժմ դուք գործեցէք, աշխատեցէք մեզանից լաւ լինել՝ նրանք զիմեցին մի միջոցի՝ իրանց նպատակին հասնելու համար: Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը յուլիսի 4-ին որոշեց այժմեան ուսուցչական խումբն ապրիլուց պահել և իր այս որոշումն ուղարկել ի վերջնական անօրէնութիւն կաթողիկոսին:

Ինչ կը նշանակի Յունիսի 3-ին պատգամաւորական ընտրութիւնները վերջացան. մի քանի օրից հոգաբարձական ընտրութիւն պէտք է լինէր (որ և այսօր պէտք է կատարվի). հասանօրէն յուլիսի 20—25-ին նոր հոգաբարձութիւնը կը հաստատվի և բաւականաչափ ժամանակ կունենայ ուսուցչական խումբը կարգադրելու ըստ իր հայեցողութեան: Եւ ահա հին հոգաբարձութիւնը արդէն կարգադրութիւն է անում եկող տարվայ համար, ուսուցչական խումբը է հաստատում, որ զուցէ հաճելի չը լինի նոր հոգաբարձութեան...

Արդեօք այս անգամ էլ չեն սխալվի: Վեհափառը շտապով կատարել է տալիս նոր հոգաբարձութեան ընտրութիւնը, որպէս զի նա անմիջապէս գործի ձեռնարկէ և եկող տարվայ համար, ուսուցչական խումբը է հաստատում, որ զուցէ հաճելի չը լինի նոր հոգաբարձութեան...

այնպէս, որ ցածր, հասարակ գիւղական կանայք, բացի զրանից, առաջինները դադարելով մայրեր լինելուց և թողնելով այդ լուծը կրելու հասարակ գիւղական կանայք, իրանք դարձած կը լինեն հրապարակային արժանի էակներ: Mais c'est tout comme chez nous! Դրանք մեր ժամանակի փայլած տեսչանքներն են, վերածած զգիտնական» փայլի:

Համարիտ, նոյն իսկ ծիծաղելի է թվում,—ասում է Միխայիլովսկին,—երբ մտաբերում էք, թէ մարդկութիւնը անձ է պրօպրիետի, գիտութեան և բարոյի մէջ, զանազան տարբերակներով պայմաններում. մասնաւորապէս աւելի տարբերակներ և ծիծաղելի է թվում, երբ այդ միտքը յայտնում են ոչ թէ դանաղան տղետ մարդիկ, այլ այնպիսի, ըստ երևոյթի, պատկառելի և լուրջ գիտնականներ, ինչպիսին է Ֆլամարիօնը:

Այդպէս է,—եզրափակում է Միխայիլովսկին,—մտքի չափազանց մասնաւորումը, սպեցիալիզացիայի հետեւումը, և եւ դարձեալ մտաբերում եմ Նովոսիլովսկին, որը միայն զեղեցիկ ու լուծ իւր է գտնել անընդհատ թշուառութիւնն և քիչ մէջ Միխայիլովսկին չէ համեմատում Ֆլամարիօնի և Նովոսիլովսկի տաղանդները, այլ վերջնում է նրանց իրեն մտքի սպեցիալիզացիայի օրինակները:

Նովոսիլովսկի — ասում է Միխայիլովսկին — զուտ նկարչի է, Ֆլամարիօնը զուտ աստղագետ է: Առաջինը, ընկնելով զուտ գեղեցիկութեան ետեւից, աչքը զգեց և նոյն իսկ այնպիսի հանգամանքներ, որոնք բոլորի և նրկի ամենատրուշ ֆակտօրներն են, և այդ պատճառով էլ ստացվել է թեմայի ոչ թէ միակողմանի, այլ և ուղղակի կեղծ լուսարձակութիւն: Իսկ Ֆլամարիօնը, ինչպէս աստղագետ, ինչպէս հեռաւոր վայրեր դիտող, դարձել է ամբողջութեամբ շարժվող հեռադիտակ, որը, ինչպէս յայտնի է, գիտէ գիտել և տեսնել շատ հեռու, բայց չը գիտէ տեսնել և գիտել այն, ինչ որ կատարվում է, այսպէս ասած, նրա բլթի տակ: Ֆլամարիօնը գիտէ

պէս գործի ձեռնարկէ և եկող տարվայ համար իր կարգադրութիւններն անէ: Ով գիտէ, զուցէ նոր հոգաբարձութիւնը ոչ թէ մի, այլ երկու տարի էլ պահի այժմեան ուսուցչական խումբը.—բայց ոչ այդ, ոչ էլ որ և է ուրիշ հանգամանք ոչ մի իրաւունք չէ տալիս հին հոգաբարձութեան՝ նոր հոգաբարձութեան շինքին փաթաթելու. մի ամբողջ խումբ:

ՍՈՎԵՏԱՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք թիւրքաց — Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովետների օգտին:

1) Ստալին Կոմիտէի, Յարութիւն Բէկզուլեանի միջոցով, 75 թուրքի: Ստալինովսկի կարգադրութեանը համապատասխան, և պ. պ. Սուբխանաւանի և Բէկզուլեանի միջոցով հանգամանակած է 182 թուրքի, որից 75 թուրքի ահա ուղարկվել է մեզ, իսկ մնացած 107 թուրքի մնում է յիշեալ քաշանայի մօտ:

2) Ստալին Կոմիտէի, 10 թ. 50 կ., որ հանգամանակ է Գրիգոր Բէկզուլեանի մի խումբ հայ մանուկների մէջ:

3) Թիֆլիսի, մի տիկնոջից 1 թ. 50 կ.: Ուրեմն նախկին 266 թուրքի 53 կօպէի հետ այժմ ունենք ընդամենը 353 թուրքի 53 կօպէ: Յունիսի 10-ին այդ գումարից 5 թուրքի տուեցինք թիւրքաց Հայաստանի գաղթած թաքաւոր Գրիգոր Գալստիանին, որ իր ընտանիքի հետ միասին կեցել է Թիֆլիս և գտնվում է անօգնական վիճակի մէջ:

Մեզ մօտ մնաց 348 թուրքի 53 կօպ: Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 6994 թուրքի 35 կ. Ուղարկել ենք 6646 թ.:

ՆԱՄԱԿ ԽՐԱՊՈՐՏԱՆԻ

Ալեքսանդրօպօլ, յուլիսի 5-ին Վարչութեան պարտք է համարում յայտնել յարգելի խմբագրութեանը, որ «Մշակի» № 65 և 71 նշանակված 100-ական թուրքի յօդուտ կարօտեալները, արդէն ստացել և գործարկել է: Վերջինից 200 թուրքի, խմբագրութիւնից ստացված նախկին 468 թուրքի հետ միասին անում է ընդամենը 668 թուրքի: Այդ մասին վարչութեան

գիտել, տեսնել XXV-երորդ դարու կանանց, բայց չը գիտէ զիտել, տեսնել և իմանալ, որ «տիկնոս-խաղաղութիւն» դերը օրից օր աւելի և աւելի անհրապարկ է դառնում կանանց մի մեծ թվի համար և որ տղամարդկանց ճաշակները և գաղափարները այդ կողմից ենթարկվում են օրից օր փոփոխութիւնների և հետեւաբար, պատմութիւնը չէ դիմում «տիկնոս-խաղաղութիւն» տիպի յաւերժացման...

Ինչպէս յայտնի է, շատ մեծ է այն մարդկանց թիւը, մասնաւորապէս Եւրօպայում, որոնք սկսում են գուշակութիւններով զբաղվել ասպագայի մասին: Այդ գուշակողները թւում մեզ համար այժմ հետաքրքիր է յայտնի ռուս գիտնական Միչնիկովը, որը Ֆլամարիօնի նման, թույլ է տուել նրանց իր մասնագիտութեան տեսակետից մի քանի գուշակութիւններ անել ապագայ կանանց մասին: Միխայիլովսկին մի քանի կտորներ է բերում այդ գուշակութիւններից. նրանք չափազանց հետաքրքիր են՝ մասնաւորապէս Ֆլամարիօնի գուշակութիւնների հետ համեմատութեամբ:

Միչնիկովը բերօք է և, հիմնվելով բերօք գիտելի մի քանի կէտերի վրա, այն է՝ ի նկատի առնելով օրգանիզմների անընդհատ փոփոխութիւնները, ժառանգական սկզբունքը և յենկելով անալոգիայի վրա միջատների կեանքից, գալիս է այն եզրակացութեան, որ, իրաւի, կանանց մի նշանաւոր մասը, չորրորդ իրանց կաղնուածքի մի քանի յատկութիւնների, ժամանակով կը կազմեն մի առանձին դասակարգ, որը կը դադարէ ծնել, կամ խօսելով Ֆլամարիօնի լեզուով, կը դադարէ մայրեր լինելուց, թողնելով այդ պաշտօնը ուրիշ կանանց:

Բայց կայ մի էական դանաղանութիւն Միչնիկովի անստույգ կանանց և Ֆլամարիօնի անստույգ կանանց մէջ: Միչնիկովի անստույգ կանայքը կը լինեն գիտնական կանայք, կամ գոնէ նրանք, որոնք նուիրված կը լինեն մտաւոր աշխատանքին, իսկ Ֆլամարիօնին—աշխարհային կանայք, որոնք նուիրված կը լինեն իրանց սեռի

յայտնում է իր խորին չորհրդակալութիւնը մարդասէր նուիրատուներին և յարգելի խմբագրութեանը: Նախագահ վարչութեան՝ Ա. Կարապետեան Գործաւարձ (չէ կարգադրվում)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Կարսի կողմերից գաղթական ընտանիքներ սկսել են ցրվել դէպի դաշնական կողմեր. դրանց մի մասը Ալեքսանդրօպօլի վրայով արդէն անցնում է դէպի Թիֆլիսի նահանգը և Երևանի կողմերը: Դրանք ամենքն էլ վերին աստիճանի թշուառ վիճակի մէջ են:

Կ. Պոլսի «Աւետարներ» շաբաթաթերթը, որ անպայման դադարում էր դատապարտված, նորից սկսել է հրատարակվել թիւրքաց տպագրական տեսչութեան հրամանով:

Մենք առիթ ունեցանք հաղորդելու, որ Թիֆլիսի առևտրական բանկի խորհուրդը վճռել է նոյն բանկի մի բաժանմունքը բանալ Երևանում: Ֆինանսների մինիստրը արդէն հաստատել է առևտրական բանկի խորհրդի այդ վճիռը և շուտով Երևանը կունենայ իր բանկը, որը կադատի Երևանի բնակիչներին և մասնաւորապէս առևտրականներին՝ անխիղճ վաշխառուների ձեռքից:

Տաքերն սկսվելուն պէս, երբ Թիֆլիսի բնակիչները պապակվում են շոգից և խեղդում են թողից, մեր քաղաքային ջրանցքում, ըստ սովորութեան, պակասում է ջուրը, և մեր քաղաքացիները միաժամանակ տեսնելով են բաւականաչափ: Մեր քաղաքի մի քանի մասերը ամբողջ օրերով առանց ջրի են մնում: Փողաքային դուման վերջապէս ուղարկութեան առնելով այդ հանգամանքը, իր նիստերից մէկում վճռեց՝ ուրիշ աղբիւրներ ևս գտնել Աւստրալի շրջակայքում և այդ նպատակով 4000 ռ. յառկացրեց: Այդպիսի աղբիւրներ գտնվել են Սաղուբամ գիւղում, ուր յուլիսի 8-ին դնաց Թիֆլիսի քաղաքապետը Բարբոտ-դէ-Մարնի ինժեների ուղեկցութեամբ այդ աղբիւրները քննակութեան, յառկութեան և ուրիշ կողմերից հետադադարելու նպատակով:

«Երեւոյթեան» կատարելագործութեանը: Բացի դրանից, այդ երկու տեսակ կանանց մէջ կը լինի և այն դանաղանութիւնը, որ նրանցից մէկը իր անստուգաբանութեան հետ կը միացնէ օրգանիզմի ամեն տեսակ փափկութիւն և քնքշութիւն, իսկ միւսը, այն է Միչնիկովի, մի և նոյն այդ անստուգաբանութեան հետ կը միացնէ ամեն տեսակ այլանդամութիւն...

Երկու գիտնականներն էլ—ասում է Միխայիլովսկին—միասնական կարծիքի են, որ կանայք աւելի ասոր կազմաւորվել են իրենցով՝ կը բաժանվեն ասպագայում անպատճառ երկու տեսակի՝ հասարակ գիւղական կանայք և բարձր աշխարհային կանայք, որոնք կոչված կը լինեն շոյելու: Գիտնականքը և փայլելու իրանց ամբողջ գեղեցկութեամբ, և պողպատու ու անստուգ կանայք, որոնք զբաղված կը լինեն գիտութիւնը առաջ մղելու հարցով, և մեծ փառս զգիտութեան: Եւ, որ նշանաւոր է, այդ գիտնականներից իւրաքանչիւրը, հիմնվելով իրանց առանձին մասնագիտական տեսակետների վրա, իրանց կարծիքները անվիճելի են գտնում և աւանդում են հասարակութեանը, իբրև անխախտելի և անզրոգելի զգիտական եղբակցութիւններ... «Բայց, ահա,—ասում է Նիկոլայ Միխայիլովսկին—Ֆլամարիօնը յայտնի գիտնական տիկնոս Կլեմանս Բոյէն, որը նոյնպէս բերօք է, համաձայն չէ մեր Միչնիկովի օրէ, հիմնվելով նոյնպէս բերօքիական տեղեկութիւնների վրա, միայն ի նկատի առնելով և ամազանկանքի մասին եղած աւանդութիւնները, գալիս է բոլորովին հակառակ եզրակացութեան այդ մի և նոյն կանանց մասին: Նա կարծում է, որ կինը ժամանակով ոչ թէ խաղաղիք առարկայ կը դառնայ տղամարդկանց համար՝ նրանց կրքերը շոյելու համար, այլ ընդհակառակը, կինը ապագայ հասարակութեան մէջ կը բռնէ ձիւղ այն տեղը, ինչ տեղ որ բռնած են այժմ տղամարդիկ մեր հասարակութեան մէջ... որ կինը ժամանակով իր ձեռքը կառնէ բոլոր հասարակական գործերի վերջ և կը դառնայ նրանց ինք-

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ նկատողութիւնը. «Շուշու թեմական դպրոցի պաշտօնական հերքումը մեզ բոլորովին ապացրեց.—միթէ ուրեմն վարձկան թերթերում մինչև այժմ այդ դպրոցի մասին տպած լուրերից և ոչ միայն ձիւղ չէ: Ամեն օր, տպագրելով ամենահեշտաւոր դրուպարութիւններ, հաղորդում էին, որ խումբը հեռացրած է, տեսուչը պաշտօնից զրկված է, նոր խումբ է կազմվում, սարսափելի դեղձումներ են բացվել, դպրոցի մէջ հակակրօնական ուղղութիւն է մտել և այլն և այլն: Եւ ահա պաշտօնապէս է մտել և այլն և այլն: Եւ ահա պաշտօնապէս է, որ այդ բոլորը սուտ է, զրուպարութիւն է:»

Կ. Պոլսի Լրագրիչների մէջ կարդում ենք, որ Ազգային պատրիարքը մի հանդիսաւոր հոգեհանգիստ է կատարել ի յիշատակ Կարնօի Հոգեհանգիստին, բացի Կ. Պոլսի Փրանսիական դեսպանից, ներկայ էին և շատ նշանաւոր կաթողիկոսներ:

Կորյնի սպանող Գարչնիկի գործի քննութիւնը աւարտված է: Հեռագիր է ստացված, որից երևում է, որ Կովկասի կառավարչապետը թող է տուել զինւորական դատարանին ենթարկել Գարչնիկին: Գործը զինւորական նահանգական դատարանում կը քննվի, ինչպէս ասում են, ոչ ուշ յուլիսի 20-ից:

Խօշերան Պետերբուրգում օրից օր սաստկանում է: Օրինակ, յունիսի 30-ից մինչև յուլիսի 1-ը, ուրեմն երկու օրվայ ընթացքում խօշերայից հիւանդացի էին 170 հոգի, իսկ այժմ, Պետերբուրգի լրագրիչները հաղորդում են, որ յուլիսի 2-ին մէկ օրվայ ընթացքում խօշերայով հիւանդացան 218 հոգի: Ուշագրութեան արժանի է և այն հանգամանքը, որ խօշերայով հիւանդացուցներ թւում կան և բարձր ու միջին դասակարգի մարդիկ:

«Հայրենիք» լրագրում կարդում ենք. «Չորեքշաբթի օրուան համար հրատարակվելով էին հրապարակական ժողովին և կրօնական ժողովին անհրաժեշտութեամբ Պատրիարքարանի մէջ գումարւելով Տեղապահի ընտրութիւն կատարելու: Սակայն, երկրաշաժի աղէտքին պատճառաւ, ժողովականները չը կարենալով պատասխանել իրենց եղած

նիշխան և միակ տէրը ու հրամայողը...

«Ինչ պէտք է անենք մենք, հասարակ մահկանացուներ, բացականչում է Միխայիլովսկին, այդ բոլոր միմեանց հակասող և իրար հետ դժուար կապվող մարդաբանութիւնների նկատմամբ, որոնց թիւը չէ որ կարելի է շատ և շատ դատաբանել: Ափոփոխեք մեր միտքը: Ի նկատի ունենալով այդ բոլոր հակասութիւնները, մեզ մնում է միայն, ասում է Միխայիլովսկին, մի քիչ աչքը առաջ ունենալ Երեմիա մարգարէի բարկութիւնը, որը նրան ստիպել էր ասել... «Նրանք խաբում են ձեզ. նրանք պատմում են ձեզ իրանց սրտերի ի լիճ եր...» Այո, աչքը առաջ ունենալով վերև յիշատակած մարգարէութիւնները, դժուար չէ նկատել, որ այդ մարգարէութիւնները իրենք իրեն անկախ վախճանը չեն նկարագրում: Գիտնական կնոջ, Կլեմանս Բոյէի, սրտի իղձերը թեւադրում են նրան այնպիսի մտքեր, որոնց իրարադրմամբ մի անարդարութիւնից կանցնեք միւս անարդարութեան. Մեչնիկովի սրտի իղձերը (գիտութեան բարձր բարդաւանճում) թեւադրում են նրան կանանց մի այնպիսի դասակարգ, որը դուրս կը լինի անստանալի կան գործունէութիւնից, միայն թէ առաջ մղված լինի գիտութեան գործը. Ֆլամարիօնի սրտի իղձերը թեւադրում են հեռու ապագայում մի շարք գիտնական աստիճան կանանց հետ և մի շարք էլ փափկատուն կանայք, միայն Նովոսիլովսկին է, որ, բարեբախտաբար, չէ զբաղվում այդպիսի նախադրականութիւններով...

Այո, դրանք սրտի իղձեր են, ինչ զգիտական ստուտով էլ դուրս բերվեն նրանք հասարակութեան առաջ, իղձեր, որոնք բոլորում են ինչորի վրա նեղ, չափազանց մասնագիտական հայեացք ունենալով, այն էլ այնպիսի խնդիր, որը ըստ իր բնատրութեան, պահանջում է աւելի լայն հասկացք և աւելի ընդարձակ ու բարեխիղճ ուսումնասիրութիւն:

Ա. Ղուկասեց

հիմնել, որը պետք է միայն եկեղեցական գործերով զբաղվել Արևելքում:

—Անարխիստները գործունեությունը Ֆրանսիայում և Իտալիայում դեռ էլի չարունակվում է, չը նայելով պոլիցիայի ձեռք առած եռանդոտ միջոցներին: Մարտելում և ուրիշ դեպքերում անարխիստները ունեցան բազմաթիվ կալանավորություններ և խուզարկություններ: Անարխիստների մոտ գտնված թղթերից երևում է, որ բոլոր երկրների և մասնաճյուղ Իտալիայի ու Ֆրանսիայի անարխիստները միշտ յարաբերություններ ունեն միմեանց հետ: Ֆրանսիայում կարգադրություն է եղած՝ սըքսոնի բոլոր օտարազգայնական անարխիստներին Ֆրանսիայի սահմաններից: Անարխիստները մասնաճյուղ չառ դարձացած է Սիցիլիայում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ԹԻՒՆՆԵՐ

ԱՐԻԱՆԳԱՆՍԿ, 8 յուլիսի: Արևմտահայկ եկալն ժողովներից առաջին խումբը՝ երկաթուղիական գիծը հետադուրեւ համար վաճառված մինչև Արևմտահայկ:

ՀՈՍՄ, 8 յուլիսի: Երգուհաների դատարանը դատապարտեց լեզին՝ Կրիստինի կեանքի դէմ փորձ անելու համար, 20 տարվա բանտարկություն:

ՊԵՏՐՈՎՈՎԻԿ, 10 յուլիսի: Առևտրի և մանուֆակտուրայի դեպարտամենտը հրապարակեց և առևտրականությունը մասնակցելու ներկայ տարվա յուլիսի 11-ից մինչև նոյեմբերի 11-ը Պարիսի դատարանի ունեցած տպագրական գործի վերաբերյալ միջոցառումներ ցուցադրելու և դրա հետ կապ ունեցող բոլոր արտադրողներին:

ԼՕՆԴՈՆ, 10 յուլիսի: Թագավորական զինուորական ծառայության և զորքերի երկու շարքի և ճանապարհ է ընկնում երեք շարքի առաջատարներ:

ՇԱՆՆԱՅ, 10 յուլիսի: Լուրեր են պտտում, որ իբր թէ Եսպանիայի պաշտպան է յայտնվել Չինաստանին: Չինացիները թույլ բարձրացրին Եսպանիայի հիստորիայի գեոգրաֆիկ մաս, նաև ընդ ստիպված են անցնել վաղուց ամբողջական առաջարկած վերանորոգությունները: Սեյու մասն զորքեր անգլիական և հիսպանական զինուորական նաւերից՝ իրանց հիսպանոսարանները պաշտպանելու համար: Չինաստանը դիմեց Եսպանիային պահանջելով, որ եսպանական զինուորական նաւերը չը մտնեն չինական նաւահանգիստները, որոնք, դաշնագրով, մատչելի են օտարներին: Եսպանիան մերժեց այդ առաջարկությունը, յայտնելով, որ պնդում է իր իրաւունքների վրա:

Ս. ՊԵՏՐՈՎՈՎԻԿԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 8-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե . . .	93	05	4
Բեռլին վրա 100 մարկ . . .	45	60	3
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36	90	0
Ուկի . . .	7	45	0
Մադրիդի վրա 100 ֆրանկ . . .	149	—	—
Արժաթ . . .	—	—	—
Բորսայի դիսկոնտ . . .	5	7	—
Պետ. բանկի 5% օտոմ 1 շրջանի . . .	—	—	—
— — — 2-րդ . . .	—	—	—
— — — 3-րդ . . .	—	—	—
5% օսկեայ բենտա 1884 թ. . .	159	50	—
4 1/2 օսկեայ փոխառություն . . .	—	—	—
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	—	—	—
— — — 2-րդ . . .	240	50	—
— — — 3-րդ . . .	225	—	—
— — — 4-րդ . . .	—	—	—
Ներքին 5% առաջին փոխառություն . . .	—	—	—
— — — երկրորդ . . .	—	—	—
Պետական երկաթուղային բենտա. 102	25	—	—
4 1/2 բենտա . . .	—	—	—
4% ներքին փոխառություն . . .	95	25	—
5% օրառ. թղթ. ագն. կալ. բանկի Ան. կալ. Պետ. բանկի խաղարկություն . . .	—	—	—
Գրառ. թղթ. . .	—	—	—
4 1/2 % վկայակ. դեղ. հող. բանկի. 93	50	—	—
4 1/2 % օրառական թղթեր կալուած. . .	—	—	—
Պետ. թղթ. . .	153	—	—
— — — թղթադ. . .	—	—	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերություն օրվադրամները. 101	—	—	—
Մոսկվայի քաղաք. օրվադրամները. 101	—	—	—
Օրվադրամ . . .	101 1/8	75	—
Թիֆլիսի . . .	99	—	—
Գրառ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. 101	—	—	—
— — — փոխադր. . .	101	—	—

Ս. Պետերբուրգի բորսայի արտադրողները ամուր է:

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՆԵՐ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՄՆԱԿԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, վարձույթի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա.Ռ.Ա.ՋԻՆԵՐԻՔ՝
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժություն և վնասվածքներ (սիֆիլիս) հիւանդություններին:
Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նաւթաշարժիչի:
Դ. Գ. ԲՈՒԴՆԻՔՈՎ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց:
Ա. Գ. ԳՈՐԻՊՈ—1—1 1/2 ժ. ակունքի, կոկորդի, և քթի:
Կին-բժիշկ ՏՈՒՐԿՈՎԱՅԵ—12 1/2—1 ժ. կանանց ց. Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երեխայից:

ԵՐԵՎԱՆԵՐԻՔ՝
Ա. Գ. ԳՈՐԻՊՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների:
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ.
Ի. Ն. ՖԱՆՆԻՔՈՎ—7—7 1/2 ակունքի, կոկորդի և քթի ու նաւթաշարժիչի: Երեխաների, չորեքշաբթի և ուրբաթ:
Ա. Գ. ԳՈՐԻՊՈ քիմիական և խոշորացուցական հետազոտություններ է անում մէզի, խրի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ.: Համախորհրդի (կոմսիտետի) ց օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցում ընդունվում են և ԳԻՇԵՐՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆՈՑ:
Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկական ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ: (№ 72)

Նիկողայոս ՏԵՐ-ՂԵՆՈՎԱՆՑԻ Հրատարակությունների պահեստը յուլիսի 10-ից մինչև առաջիկայ սեպտեմբերի 1-ը յանձնված է Կենդանական գրադաճառանոցին, ուր պետք է դիմեն այդ գրքերի պետք ունեցողները: (№ 73) (Ե.) 5—10

Վ ա ճ ա ո վ ո ռ է
Մ Տ Գ Ի Մ Շ Ա Կ Ը
Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ
Գինն է 50 կոպեկ: Գինը հեղինակին, կամ կենտրոնական գրադաճառանոցին, Թիֆլիսում:
(№ 18) 5—5

ԱՐԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա. Հատորի գինն է . . . 3 ր.
Բ. Հատորներ . . . 4 ր.
Վաճառվում է խրդեկէլի գրավաճառանոցում, Գոթովինսկի պրոսպեկտ:
Գրավաճառներին 10% զիջում:
(№ 58) 9—10

Խնդրվում է Հայ հեղինակներին, թարգմանիչներին և առհասարակ ցանկացողներին, որ բարեհաճեն իրանց հեղինակությունները, թարգմանությունները և ունեցած գրքերից մի-մի կամ մի քանի օրինակ նուիրել ԱՍԵՐԻՎԱՍԻ ՀԱՅ ՊԱՆԻՈՒՑՆԵՐԻ:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ

Ցանկացողները պետք է ուղարկեն այս Հասցեով. M-r N. Karapetian, 439, P. O. Rox. WORCESTER, MASS, E. U. d'AMERIQUE. 6—10

Թէ հրանի Հայկազեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է ՄԻ ՌՈՍԻՆՑԻՔԻ կրօնի, Հայոց լեզուի, Հայոց պատմության, Թուրքաբանության և այլնների: ՄԻ ՎԱՐՃՈՒՅԻՔ կար ու ձեռի, ձեռագործի, Հայոց լեզուի և Թուրքաբանության: Ամեն մէկը շարաթական 26 ժամ դասով: Ցանկալի կը լինէր, որ այդ և կին կամ քոյր և եղբայր լինէին: Պայմանների համար դիմել Թէհրան, Շաբիզի՝ Խմբագրություն, կամ Աղզային Ուսումնասիրաց ընկերության վարչություն:
(№ 68) 4—4

ՍՐՔԱԶԱՆ ԱՌԱՋԻՆՈՐԴԻ ՀՐԱՄԱՆԱԿԸ Կ. Կ. ԿԱՌԱՎԱՐԱՐԱՅ, ՈՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Իրենց է ամսիս 12-ին, երեքշաբթի, երկուշիկ ուղի ժամը 7-ին, Նորին Սրբաշնութեան նախագահութեամբ, Ներսիսեան դպրանոցի դահլիճում: Ձայն կունենան միմայն ներկայ գտնված պատգամաւորները:
Գործակալը Ա. և Բ. մասանց Տիֆլիսի, Գիւտ քահանայ Աղանեանց և Համադասպ քահանայ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ:
2—2

Թաւրիզի «ԱՐԱՄԵԱՆ» եւ «Ս. ԱՆՆԱՅԻ» երկսեռ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր է մի հմուտ Հայ ուսուցիչ որը պիտի վարէ նոյն դպրոցների տեսչական պաշտօնը, այլ և շարաթական 16 դաս. զաղջիկական լեզուն պիտի աւանդէ միայն Արամեան դպրոցում: Պայմանների համար խնդրվում է դիմել Թիֆլիսում պ. Ս. ՄԷԼԻՔ-Աղզարեանցին և պ. Խոսրով Արզումանեանցին:
(№ 79) 1—8

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿՍԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են ՌՈՍՈՒՑԻՆԵՐ, ՎԱՐՃՈՒՅԻ և ԱՆԱԳ ՌՈՍՈՒՑԻՆԵՐ: Ցանկացողներ կարող են դիմել ինձ՝ «Ֆրանսիա» հիւրանոցը № 26 պայմանների համար խօսելու:
Թ. Փանեանց (№ 79) 1—3

ՄԻՆԵՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթություն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Առևտրողները ստանում են առեւտրական և արհեստական կրթություն: Առևտրական առարկայք սրանք են՝ 1) Առևտրական հետախույզություն, 2) Առևտրական թուղթաբանություն, 3) Հաշուապահություն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուղթաբանություն համարիչի վրա, 5) Առևտրական թղթաբանություն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրություններ և 7) զեղադրություն, վատ ձեռքի ուղղելը:
Ուսումը սկսվում է սեպտեմբերի 15-ից: Ընդունվում են սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երկուշիկ 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլովակում, Ալեքսանդր Գրիգորովի տանը, № 9, Սերգիևսկայա փողոցների անկյունում: Ծրագրեր և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Մովսիսյանների բանկային գրասենյակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում են՝ Тифлисть, С. П. Мануэльянцу.
12—32
№ 62

ՁՈՒԻ ՍԱՊՈՆ
ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО. ВЬСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.
25—25 (2) № 86
ՇԱՄԱՌԻ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՍԱԿԱՆ ԵՄԱԿԱՆ ՄԻԿԱՍԵԱՆ դպրոցների համար զիւղերում հարկաւոր են Գ. զաւակարգի ուսուցիչները Ռոճիլը՝ ըստ առաջին կողարի Բացի դրանց տրվում է նաև ճանապարհաճախ, բնակարան, փայտ և ծառայ: Ցանկացողները թող դիմեն ինձ, Շամալի:
3—3 (№ 74) Թեմական տեսուչ՝ Եղիշէ քահ. Գեղամեանց

ՀԱՄԱՌԻ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՍԱԿԱՆ ԵՄԱԿԱՆ ՄԻԿԱՍԵԱՆ դպրոցների համար զիւղերում հարկաւոր են Գ. զաւակարգի ուսուցիչները Ռոճիլը՝ ըստ առաջին կողարի Բացի դրանց տրվում է նաև ճանապարհաճախ, բնակարան, փայտ և ծառայ: Ցանկացողները թող դիմեն ինձ, Շամալի:
3—3 (№ 74) Թեմական տեսուչ՝ Եղիշէ քահ. Գեղամեանց

НЪМЕЦКАЯ ГОСТИНИЦА
HOTEL NIEMIECKI, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ համարում է ՎԱՐՇԱՎԱՅԻՍԻ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմերներ որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենականներին է նման: Նոմերների գինը 50 կոպեկից մինչև 3 րուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, օրտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Դար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բնաստան, անկեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ:
Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 92—130 (2.)

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍԱՆԿԵԱՆԻ ՊԱՇԵՍԵՐԻ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Դեղերի, մորթիների զեղեցկացող և հոտաւետ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, վարձուցով արձանի հանդէպ, բժշկական Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:
(№ 67) 86—100 (Ե. 2.)